*սբ · գրոցս եւ կարդացողք եւ լսողք յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՏրտր քհ · եւ զՅովս · քհ · եւ զհայրն իւրց · զԱծատուր · եւ զմայրն Սաւլթան եւ զքոյրն իւրց · զԹանկսուղն եւ զՄաղթումշէն եւ զքըւերդուստրն Խաթունջանն եւ զայլ ամ · արեանառու մերձաւորսն , ասելով ի խորրոց սրտէ , թէ տր · Ած · ողորմեա նց · եւ գրեա զնս · գիրն կենաց ամէն ·* (բաց 7½ տող) :

*Այլեւ կրկին անգամ աղաչեմ յիշել յաղաւթս ձեր զիս զբազմամեղ գրիչս զտր · Յոհանէս եպս · եւ զեղբայրն իմ զտր · Ստեփանոս այժմ նահանգիս Կոտայից երկրիս , որ աշխատեցայ բզմ · եւ հոգաբարձութբ · գրեցի ըստ կարեաց մերոց , զի ժամանակս դառն էր , որ այլազգեաց չատ նեղութի · քաշեցաք , որ յասմ ամի , Խ , ազատորդի կալան , թէ տաճկացէք · այլ ողորմածն Ած · ձեռնտու եւ ագնական եղեւ նց · , յորոց մի էր եղբայրն իմ պր · Հայկազն եւ պր · Աւազն , որ , է , ամիս կալուլական կացին եւ բզմ · տուգանք տվին եւ ի հօատոցս Քի · ոչ դարձան , ար//արիչն · Ած · վարձս բարեաց պարգեւեսցէ նց · յիւր միւսանգամ գալստեանն ամէն :*

*Այլ եւ զհոգեւոր ծնաւղն մեր զքաջ քարտուղար վարպետն զտր · Մաթէոս , որ զաւրինակն շնորհեաց · տր · Ած · զհոգի նր · ընդ սբ · զհայրց դասակից առնէ , ամէն :*

*Այլ եւ զսիրասնունդ հոգեւոր եղբարքս մեր , զտր · Ստեփանոս եպս , պայազատ , եւ զտր · Մաթէոս եպս , որք աւգտակար եղեն կամակցութբ · եւ զծաղկող եւ զկազմող , զարդարող գրոցս զտր · Ալէքսանոսն , զՄիքայէլն եւ զՍիմէոն սրբասնեալ կրաւնաւորքն , այլ եւ զմարմնաւոր ծնաւղսն մեր յիշման արժանի առնէք աղաչեմ միով տր · ողորմայիւ եւ Ած · զյիշողքդ յիշէ յիւր միւսանգամ գալստեանն , եւ ձեզ յիշողացդ , եւ մեզ յիշեցելոցս , եւ զստացողաց գրոցս առ հասարակ մեղաց թողութի · շնորհեսցէ եւ արժանի արասցէ անմահ կենացն եւ երկնից արքայութեն · ընդ ամ · սբս · իւր ամէն , այլ եւ խոշորութե · գրոյս եւ սղալանացն անմեղադիր լերուք , զի վս · դառնութե ժամանակիս եւ վս · մեղաց իմոց միտք իմ չմորեալ է :*

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ · 36 ·

## Ա · Գրքի եր · 244 · ծ ·

## (No. 1610/1613 · *Ծարական*)

128ա · *Ոհ զՋաքարիա մեղապարտ եպս · գծող եւ ծաղկող այսմ տառիս աղաչեմ յիշել ի տէր :*

128բ · ***Յարութեան պատկերի տակ ·***

*Զնկրչ · չրկնոցիս · զՋքրիա · եպս · յՀԱ · ի տր · աղչմք ·*

176բ · ***Հոգեգալստեան պատկերի տակ ·***

*Զստացող չարկնցիս · զտր · Մելքսթ · քհ · յՀՑԼ ·* (s!) *ի տր · Ած ·*

318բ · *Զաքարիա մեղապարտ գծողիս եւ նրկաղիս* (s!) *Ած · ողորմի ասացէք , դարձեալ աղաչեմ յիշել ի տր · զզուսուցիչքն* (s!) *իմ զշնորհազարդ եւ զպատուական հայրապետն զԳրիգորիս Աղթամարցին եւ զՅովսէփ վարպետն , որ շատ աշխատեցան ի յուսուցանելն իմ :*

354բ · *Փառք սբ · երրորդութեն · եւ մի ածութե · ամէն :*

*Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականութես · հայոց Ռ · ԻԵ · ի բռնակալութե · Աւսման ազգին եւ ի հայրապետութե · տն · տր · Առաքել · կթուղիկոսին · սբ · աթոռոյն էջմիածնայ , ի յանապատիս Լիմն կոչեցեալ , ընդ հովանեաւ տաճարիս սրբոյն Գէորգայ , որ կառուցեալ կայ նման վերին խորանին : Ձեռամբ անարհեստ գրչի Զաքրիյ · եպս · նկարողի · զաւրութբ · պարգեւողին յանձնառի եւ զխնդիրս զբարեսէր քահանային կատարեցի տր · Մելքսեթին · նախ զգիրն , երկրորդ զարհեստն զրճգիրն* (?) *եւ զհիպիլին* (?) *իմիսկոս* (?) : *Երրդ · զերկաթագիրն : Չրրդ · զերեք խորանսն եւ զտնաւրինականքն տախտակ ոսկով եւ ագնիւ լաժվարդով , եւ նուրբ թփերով · եւ ծաղկայգրով ի փառս փրկչին եւ ի վայելումն Մելքսէթ քհին · որ ստացաւ զանաւիկ զանձս զայս չարակնոցս ի հալալ արդեանց եւ յարդար վաստակոց յիշատակ իւր եւ կնոջն Ուրախին եւ որդոցն Յովսփին · եւ Կարապետին եւ ծնաւղացն Աւետին եւ Ջահանին · եղբաւրն Մրտին* (*Մարտիրոսին* ?) *եւ որդոցն Յովանիսին եւ Աւեդին , եղբաւրն Աղաջին* !, *Միրիջանին : Միւս եղբաւրն Փիրիջանին եւ Սիմամոնին* (s!) : *Միւս եղբաւրն Ամիրջանին եւ եղբաւրն Նազարին եւ որդոյն Թումաջանին : Միւս եղբաւրն Մէհերին եւ որդոյն Զիրաքին · եւ քուերցն Շահումին եւ Քիշմիշին եւ իւր ամ · արեանառու մերձաւորաց թողու տր · Ած · զամ · մեղս նց · զկամայ եւ զակամայ , խաչի լուսոյն , Գաբրիէլի փողոյն , երանաւէտ ձայնին եւ անթառամ պսակին եւ լուսեղէն առագաստին արժան առնէ զտէր Մելքսէթի հոգին · եւ զինչ անուանք որ աստ յիշւին արժան լինին փառաց փրկչին , յաջակողմեան դասն կարգին , եւ ահեալ · ձայնին արժան լինին · եկեայք* (s!) *աւհեալ · էք հօր իմոյ , ժառանգեցէք զանճառ բարին , զոր պատրաստեալ է միածին իւր սիրելեաց յաւրն վերջին , զտէր Մելքսէթի հոգին դասակից առնէ նոցին , եւ զիւր ննջեցեալքն զամսին · առնէ հաղորդ փառաց նոցին եւ անթառամ սբ · պսակին · ամէն :**

---

*Կաշէպատ 12½×9×6 սմ · տպած զարդարանքներով , թուղթ , օսլայած , լաւ եւ տեղ տեղ մի կամ մի քանի թերթ մագաղաթ : Բոլորգիր : Նկարազարդ :

Նկարներ · ա) Յովակիմ եւ Աննա , եւ սկզբնազարդ :
բ) Յարութիւն եւ սկզբնազարդ :

Լուսանցքի եւ սկզբնազարդեր · լուսանցքում նաեւ պատկերներ :

Տնօրինականները ու սկզբնազարդերը , նաեւ լուսանցքի պատկերները ու ոսկեզօծ թփերը ազնիւ են եւ կիլիկեան արուեստին մօտ : Լուսանցքի եւ մանրանկարչական տառերի մի մասը առանց ոսկու , բայց նոյնպէս ազնիւ :